ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**
MINISTRY OF ENVIRONMENT OF THE REPUBLIC OF ARMENIA
**ECOPATROL SERVICE**
**GENERAL SECRETARY**
МИНИСТЕРСТВО ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
**ЭКОПАТРУЛЬНАЯ СЛУЖБА**
**ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ**

0011, ք. Երևան, Ա.Արմենակյան 129
A. Armenakyan 129, Yerevan, 0011, Armenia
0011, Армения, г. Ереван, А. Арменакяна 129
Էլ.փոստ՝/e-mail:/эл.почта: **lusine.aleksanyan@ecopatrolservice.am**
Կայք՝/web:/сайт: **www.ecopatrolservice.am**
Հեռ.՝/tel:/тел: +374 10 65 09 35

№ Ե/2/2823-25

«28» «Սեպտեմբերի» 2025թ.

«ՍՈՐԵԼԼԻ» ՍՊԸ-ի տնօրեն
Տիգրան Սիրեկանյանին

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Սիրեկանյան

Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության (այսուհետ՝ Գնորդ) և «ՍՈՐԵԼԼԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2025 թվականի սեպտեմբերի 30-ին կնքվել է «ՇՄՆԷՊԾ-ԳՀԱՊՁԲ-25/24-1» ծածկագրով ապրանքների ձեռքբերման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Վերոնշյալ Պայմանագրի համաձայն Վաճառողի կողմից պետք է իրականացվեր 15 հատ «Սեղանի համակարգիչներ» գնման առարկայի մատակարարումը:

Համաձայն Պայմանագրի 1.1 կետի՝ Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի Հավելված №1-ով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Համաձայն Պայմանագրի 2.4.1 կետի՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի Հավելված №1-ով՝ մատակարարման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանված պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 21 օրյա ժամկետում՝ մինչև 2025 թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ:

Համաձայն Պայմանագրի 2.1.1 կետի՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 (հինգ) օրից ավելի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՍՈՐԵԼԼԻ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները և հիմք ընդունելով Պայմանագրի 8.11 կետը Պատվիրատուն միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով Հայաստանի Հանրապետության

կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում պայմանագրի կատարման ապահովման գումարը, ինչը կազմում է 465 000 (չորս հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ, անհրաժեշտ է վճարել ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 հաշվեհամարին, իսկ որակավորման ապահովման գումարը՝ 697 500 (վեց հարյուր իննսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ վճարել ֆինանսների նախարարության կողմից բացված 900008000664 հաշվեհամարին և շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայությանը ծանուցել վճարման անդորրագրերի պատճենները կամ դրանք տրամադրել s.ghazaryan@ecopatrolservice.am էլեկտրոնային փոստի հասցեով:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում՝ պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

ա) լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման վերը նշված գումարները, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

բ) մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

12/1/2025

X

ԼՈՒՍԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: ALEKSANYAN LUSINE 7212860204 Լուսինե Ալեքսանյան

Գնումների բաժնի պետ
Սուսաննա Ղազարյան